



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

26.01.2018թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ՍՑ-ԱՄ-2017/84

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.12.2017թ. թիվ 03/26-3/22122-17 գրությամբ «Տարտլետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 28.11.2017թ. թիվ ԴՎԱ/4300 գրության հիման վրա, 01.12.2017թ. թիվ 03/26-3/22122-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Տարտլետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Տարտլետ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Տարտլետ» ՍՊԸ-ն խորհրդին ուղղված 13.12.2017թ. գրությամբ հայտնել է, որ առկա չէ Ընկերությանը Ցուցակում ներառելու հիմք՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 28-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ եթե գնումն իրականացվում է չափաբաժիններով, և մասնակիցներին թույլատրվում է հայտեր ներկայացնել գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների միայն մի մասի համար, ապա հրավերը պետք է պարունակի դրա պայմանները և կարգը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 18-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների:

Կարգի 63-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

2) եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ գնման ընթացակարգի շրջանակում չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը կամ գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքի ձեռքբերումը կամ մասնակիցն անհատ ձեռնարկատեր

չհանդիսացող ֆիզիկական անձ է կամ գնման ընթացակարգը կազմակերպվում է սույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ապա սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջը չի սահմանվում հրավերով և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին.

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

ՀՀ ֆինանսների նախարարությունը վերոհիշյալ հարցի կապակցությամբ ներկայացրել է պաշտոնական պարզաբանում, որի համաձայն. «Ինչպես հայտնի է, ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 18-րդ ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների:

Սույն թվականի մայիսի 24-ի ՀՀ ֆինանսների նախարարի համապատասխան հրամաններով սահմանվել են գնումների բազային միավորի հնգապատիկը գերազանցող և չգերազանցող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերը, որոնք տեղադրված են www.gnumner.am կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում:

Նշվածով պայմանավորված՝ հայտնում ենք, որ գնման գործընթացներ կազմակերպելիս հիշյալ օրինակելի ձևերը կիրառելիս որպես գնման առարկաների նախահաշվային գներ անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ գնման գործընթացի շրջանակներում յուրաքանչյուր չափաբաժնի գնման առարկայի նախահաշվային գինն առանձին, այլ ոչ թե բոլոր չափաբաժինների նախահաշվային գների հանրագումարը, օրինակ՝ եթե նախատեսվում է ձեռք բերել A4 ֆորմատի թուղթ և գրիչ գելային, որոնց համար ըստ հաստատված գնումների պլանի հատկացված են համապատասխանաբար 7,0 մլն. ՀՀ դրամ (2800 տուփ x 2500 ՀՀ դրամ) և 1,5 մլն. ՀՀ դրամ (2500 հատ x 600 ՀՀ դրամ), ապա որպես նախահաշվային գին պետք է հիմք ընդունել յուրաքանչյուր չափաբաժնի նախահաշվային գինը և/կամ A4 ֆորմատի թղթի համար կազմակերպել առանձին գնման գործընթաց՝ կիրառելով գնումների բազային միավորի հնգապատիկը

գերազանցող գնման հայտարարության և հրավերի օրինակելի ձևը, իսկ գրիչ գելայինի համար կազմակերպել առանձին գնման գործընթաց՝ կիրառելով գնումների բազային միավորի հնգապատիկը չգերազանցող գնման հայտարարության և հրավերի օրինակելի ձևը, կամ երկու գնման առարկաների համար կազմակերպել մեկ գնման գործընթաց՝ հրավերում յուրաքանչյուր գնման առարկայի համար նախատեսելով որակավորման չափանիշների առանձին պահանջներ»:

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հացի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՐՄԱՊՁԲ-7/1» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգով հրավերի 1-ին մասի 1-ին կետով գնման առարկան խմբավորվել է 84 չափաբաժինների:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ սույն գնման ընթացակարգին մասնակցելու իրավունք ունեն այն անձինք, որոնք ունեն կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող .. ֆինանսական միջոցներ...:

«Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող՝

- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից.

• - հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի ակտիվների հաշվեկշռային արժեքը.

բ. սույն ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, որի իսկությունը հանձնաժողովը գնահատում է սույն հրավերով սահմանված պայմաններով:

գ. եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ մասնակիցը անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է, ապա սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պայմանը չի գործում և տվյալ մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն:

դ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների հայտ է ներկայացրել նաև «ՏԱՐՏԼԵՏ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտ է ներկայացրել 6 չափաբաժինների համար, և բոլոր 6 չափաբաժինների համար առանձին ներկայացված գինը չի գերազանցել գնումների բազային միավորի հնգապատիկը՝ 5 000 000 ՀՀ դրամը:

Չափաբաժին Հ/Հ	Տարածաշրջան	Չ/Մ	Առաջարկ
25	Էջմիածին 41096 զորամաս	կգ	2 256 000 ՀՀ դրամ
26	Հայանիստ 43755 զորամաս	կգ	2 820 000 ՀՀ դրամ
28	Մերձավան 43755 զորամաս	կգ	2 256 000 ՀՀ դրամ
64	Քասախ 43755 զորամաս	կգ	3 384 000 ՀՀ դրամ
66	Քասախ 93953 զորամաս	կգ	1 128 000 ՀՀ դրամ
77	Երևան 50552 զորամաս	կգ	3 384 000 ՀՀ դրամ
Ընդամենը	6	կգ	15 228 000 դր

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 11.10.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «ՏԱՐՏԼԵՏ» ՍՊԸ-ն 25-րդ, 26-րդ, 28-րդ, 64-րդ և 77-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Պատվիրատուն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 3-րդ ենթակետով, 08.11.2017թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ նաև՝ Կոմիտե):

Կոմիտեն 09.11.2017թ. ներկայացրել է եզրակացություն, որի համաձայն «ՏԱՐՏԼԵՏ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող երեք տարիների համախառն եկամուտը կազմել է 95 103 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի 17.11.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ Ընկերությունը չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջը, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է մերժել «ՏԱՐՏԼԵՏ» ՍՊԸ-ի հայտը:

Հանձնաժողովը նաև արձանագրել է, որ Կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն, հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջները առկա են մասնակիցների մոտ, բացառությամբ «ՏԱՐՏԼԵՏ» ՍՊԸ-ի, որտեղ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից:

Այսպիսով, Ընկերության կողմից ներկայացված առավելագույն՝ մեկ չափաբաժնի համար նախատեսված գնային առաջարկը կազմել է 3 384 000 ՀՀ դրամ՝ այսինքն գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ գնման ընթացակարգի շրջանակում Ընկերության կողմից ներկայացված առավելագույն չափաբաժնի մասով չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, հետևաբար գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումը պետք է իրականացվեր ըստ առանձին չափաբաժինների, իսկ այս պարագայում «ՏԱՐՏԼԵՏ»

ՍՊԸ-ի գնային առաջարկը չի գերազանցել հինգ միլիոն ՀՀ դրամը, ինչի պարագայում Ընկերությունը թիվ 3 հավելվածով ներկայացրել է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին, սակայն Կարգի 63-րդ կետի պայմաններով նախատեսված՝ պարտավոր չէր ներկայացնել որակավորման չափանիշներին համապատասխանելու մասին որևէ հիմնավորում, ինչն և Պատվիրատուի կողմից համարվել է որպես պարտավորության խախտում:

Ընկերությունը գտնում է, որ վերոգրյալ իրավական հիմքերի և փաստական հանգամանքների վերլուծությունից հետևում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 8-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 18-րդ ենթակետով, 63-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջները, քանի որ Պատվիրատուի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/1» ծածկագրով ընթացակարգի հրավերը պատրաստվել և կազմվել է վերոհիշյալ օրենսդրական նորմերի խախտումներով, ինչպես նաև հակասում է ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով հաստատված գնումների գործընթացներում կիրառվող փաստաթղթերի օրինակելի ձևերին, ինչն և իր հերթին ապացուցվում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված վերոհիշյալ պարզաբանմամբ:

Ընկերությունը գտնում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից գնման ընթացակարգի հրավերը կազմվել է սխալ, չեն պահպանվել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված մի շարք պահանջներ, ինչով պայմանավորված ընկերությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին վերոհիշյալ գրությամբ խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված «ՏԱՐՏԼԵՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել, ընկերությանը չներառել նշված ցուցակում:

«Տարտլետ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 05.12.2017թ. ժամը 12:00-ի և 08.12.2017թ. ժամը 11:40-ի նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 28.11.2017թ. թիվ ԴՎԱ/4300 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի միջոցով գնում կատարելու ընթացակարգում «Տարտլետ» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Սահմանված կարգով Ընկերությանը Armeps համակարգի միջոցով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ: Սահմանված ժամկետում Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերում առկա էին անհամապատասխանություններ, որոնց վերաբերյալ սահմանված կարգով ծանուցվել է Ընկերությանը:

«Տարտլետ» ՍՊԸ-ի կողմից պահանջվող շտկումները չեն կատարվել, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, որոշել է Ընկերության հայտը մերժել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 05.12.2017թ. ժամը 12:00-ի և 08.12.2017թ. ժամը 11:40-ի նիստերի վերաբերյալ, 05.12.2017թ. ժամը 12:00-ի նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2017/84 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/84 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հացի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթ:

2. Համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստատված գնման հայտի՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/1» **ծածկագրով հրափապ բաց մրցույթը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին ենթակետի հիման վրա:**

3. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթին մասնակցելու նպատակով ի թիվ այլ մասնակիցների 11.10.2017թ. հայտ է ներկայացրել «Տարտլետ» ՍՊԸ-ն:

4. Ընկերությունը հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ Ընթացակարգի 6 չափաբաժինների մասով, որը կազմել է՝ **2 256 000 ՀՀ դրամ՝ 25-րդ չափաբաժնի համար, 2 820 000 ՀՀ դրամ՝ 26-րդ չափաբաժնի համար, 2 256 000 ՀՀ դրամ՝ 28-րդ չափաբաժնի համար, 3 384 000 ՀՀ դրամ՝ 64-րդ չափաբաժնի համար, 1 128 000 ՀՀ դրամ՝ 67-րդ չափաբաժնի համար, 3 384 000 ՀՀ դրամ՝ 77-րդ չափաբաժնի համար:**

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.10.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 4-րդ կետի 4.1 ենթակետով կայացված որոշմամբ «Տարտլետ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 25, 26, 28, 64, 67 և 77-րդ չափաբաժինների մասով:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա, 08.11.2017թ. «Տարտլետ» ՍՊԸ-ի վերաբերյալ հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե:

7. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 09.11.2017թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Տարտլետ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելու նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է **951 103 ՀՀ դրամ:**

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 44-րդ և 47-րդ կետերի դրույթները, ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրյա ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

9. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.11.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով կայացված որոշմամբ «Տարտլետ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից չի շտկվել «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող անհամապատասխանությունը:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.12.2017թ. թիվ 03/26-3/22122-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 28.11.2017թ. թիվ ԴՎԱ/4300 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 63-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի

Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

Նույն կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի համաձայն՝

2) եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ **գնման առարկայի նախահաշվային գինը փվյալ գնման ընթացակարգի շրջանակում չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը** կամ գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքի ձեռքբերումը կամ մասնակիցն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է կամ գնման ընթացակարգը կազմակերպվում է սույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ապա սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջը չի սահմանվում հրավերով և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին.

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հացի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթ:

ՀՀ պաշտպանության նախարարության պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստատված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/1» ծածկագրով ընթացակարգի գնման հայտով նախատեսվել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին ենթակետի հիման վրա:

Նույն գնման հայտով սահմանվել է, որ **մասնակիցներից անհրաժեշտ է պահանջել «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը՝ օրենքով սահմանված կարգով:**

Գնման հայտում նշվել է նաև, որ **նախնական հաշվարկով յուրաքանչյուր չափաբաժնի նախահաշվային գինը փվյալ ընթացակարգի շրջանակում գերազանցելու**

է գնումների բազային միավորի հնգապատիկը, ընդ որում՝ ընթացիկ կամ նախորդ տարիների ընթացքում տվյալ ապրանքատեսակի մասով կնքված պայմանագրեր առկա չեն:

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՐՄԱՊՁԲ-7/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 2-րդ կետի 2.5-րդ ենթակետի 3-րդ պարբերությունը սահմանում է, որ մասնակցին ներկայացվող «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող՝

- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից.

- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի ակտիվների հաշվեկշռային արժեքը.

բ. սույն ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար **մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, որի իսկությունը հանձնաժողովը գնահատում է սույն հրավերով սահմանված պայմաններով:**

գ. **երթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ մասնակիցը անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է, ապա սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պայմանը չի գործում և տվյալ մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն:**

դ. **մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:**

Հրավերի ՄԱՍ I-ի 8-րդ կետի 8.13-րդ ենթակետի 3-րդ պարբերության համաձայն հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող

աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Նույն կետի 8.20-րդ ենթակետի 2-րդ պարբերությունը սահմանում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված, ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի և (կամ) ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները, ներառյալ ապրանքի ամբողջական նկարագրի վերաբերյալ:

Հրավերի 8-րդ կետի 8.21-րդ ենթակետի 2-րդ պարբերության համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակցից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.20-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 24-րդ կետը սահմանում է, որ գնման գինը ապրանքը, աշխատանքը, ծառայությունը ձեռք բերելու համար Հայաստանի

Հանրապետության կառավարության սահմանած կարգով հաշվարկված նախահաշվային գինն է:

Կարգի 16-րդ կետի 1-ին պարբերությունը սահմանում է, որ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում:

Միևնույն ժամանակ Կարգի 18-րդ կետը սահմանում է, որ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով:

ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստատված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊԶԲ-7/1» ծածկագրով ընթացակարգի գնման հայտով (այսուհետ նաև՝ Գնման հայտ) սահմանվել է, որ Ընթացակարգը նախատեսվում է կազմակերպվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին ենթակետի հիման վրա, այսինքն՝ մինչև տվյալ գնման առարկայի համար ֆինանսական միջոցներ նախատեսելը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությունը սահմանում է, որ եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա, ապա ապրանքների գնման դեպքում հայտով ներկայացվում է նաև ընթացակարգը կազմակերպելու կամ դրան նախորդող տարվա ընթացքում նմանատիպ ապրանքի ձեռքբերման նպատակով կնքված պայմանագրով (գործարքով) սահմանված մեկ միավոր գինը, եթե առկա է նման պայմանագիր (գործարք): Եթե նմանատիպ պայմանագիր առկա չէ, ապա դրա մասին հայտում կատարվում է նշում, իսկ գինը չի սահմանվում:

Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստատված գնման հայտում նշվել է, որ ընթացիկ կամ նախորդ տարիների ընթացքում տվյալ ապրանքատեսակի մասով կնքված պայմանագրեր առկա չեն: Միևնույն ժամանակ նույն գնման հայտում նշվել է նաև, որ նախնական հաշվարկով յուրաքանչյուր չափաբաժնի

նախահաշվային գինը տվյալ ընթացակարգի շրջանակում գերազանցելու է գնումների բազային միավորի հնգապատիկը:

Կարգի 63-րդ կետի 2-րդ ենթակետը սահմանում է, որ «...եթե գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ գնման ընթացակարգի շրջանակում չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը ... ապա սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջը չի սահմանվում հրավերով և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին»:

Խորհուրդն արձանագրում է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնման առարկայի նախահաշվային գին որպես այդպիսին չի սահմանվել, քանի որ Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին ենթակետի հիման վրա՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, հետևաբար, նախահաշվային գնի բացակայության պայմաններում, Կարգի 63-րդ կետի 2-րդ ենթակետը չի կարող կիրառվել սույն Ընթացակարգի շրջանակներում:

Միևնույն ժամանակ Ընթացակարգը կազմակերպվել է ՀՀ ֆինանսների նախարարի 24.05.2017թ. «Բաց մրցույթով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող գնումների բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերը հաստատելու մասին» թիվ 244-Ա հրամանով սահմանված կարգով, ուստի այլ որակավորման չափանիշների վերաբերյալ պահանջի հետ մեկտեղ Ընթացակարգի հրավերով նախատեսվել է 63-րդ կետի 1-ին ենթակետի «ա» ենթակետով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» չափանիշի պահանջը և այն գնահատելու կարգը:

Մասնավորապես հրավերով սահմանվել է, որ մասնակցի հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից:

Ընդ որում վերը նշված պահանջին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն,

որի իսկությունը հանձնաժողովը գնահատում է սույն հրավերով սահմանված պայմաններով՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու միջոցով:

Այսպես՝ Ընկերությունը հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ Ընթացակարգի 6 չափաբաժինների մասով, որը կազմել է՝ **2 256 000 ՀՀ դրամ՝ 25-րդ չափաբաժնի համար, 2 820 000 ՀՀ դրամ՝ 26-րդ չափաբաժնի համար, 2 256 000 ՀՀ դրամ՝ 28-րդ չափաբաժնի համար, 3 384 000 ՀՀ դրամ՝ 64-րդ չափաբաժնի համար, 1 128 000 ՀՀ դրամ՝ 67-րդ չափաբաժնի համար, 3 384 000 ՀՀ դրամ՝ 77-րդ չափաբաժնի համար:**

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.10.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 4-րդ կետի 4.1 ենթակետով կայացված որոշմամբ «Տարտլետ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի վերը նշված բոլոր չափաբաժինների մասով:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 09.11.2017թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Տարտլետ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է **951 103 ՀՀ դրամ:**

Հրավերի ՄԱՍ I-ի 8-րդ կետի 8.20 ենթակետի համաձայն՝ հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների:

Խորհուրդն արձանագրում է, որ «Տարտլետ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելուն նախորդող երեք տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է Ընկերության 6 չափաբաժինների յուրաքանչյուրի մասով ներկայացված գնային առաջարկից, **մինչդեռ Ընկերությունը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:**

Ինչ վերաբերում է Ընկերության այն պնդմանը, որ «Տարտլետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առավելագույն մեկ չափաբաժնի համար նախատեսված գնային առաջարկը կազմել է 3 384 000 ՀՀ դրամ, այսինքն գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ ընթացակարգի շրջանակում Ընկերության կողմից ներկայացված առավելագույն չափաբաժնի մասով չի գերազանցում գնումների բազային միավորի

հնգապատիկը, հետևաբար գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումը պետք է իրականացվեր ըստ առանձին չափաբաժինների, իսկ այս պարագայում Ընկերության գնային առաջարկը չի գերազանցել հինգ միլիոն ՀՀ դրամը, ապա Խորհուրդը անհրաժեշտ է գտնում նշել, որ **«գնման առարկայի նախահաշվային գին (գնման գին)» և «մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկ»** հասկացություններ նույնական չեն: Նախահաշվային գինը գնման պլանով նախատեսված գնման առարկայի գինն է (բացառությամբ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված կարգով գնում կատարելու դեպքի) և ընթացակարգը գնումների բազային միավորի հնգապատիկը գերազանցելու կամ չգերազանցելու համար սահմանված կարգով ընթացակարգը կազմակերպելու ձևի ընտրության դեպքում (այդ թվում՝ Կարգի 63-րդ կետի 2-րդ ենթակետի կիրառելի լինելու հանգամանքը) հիմք է ընդունվում գնման առարկայի նախահաշվային գինը, այլ ոչ թե մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը:

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը սահմանում է, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը **պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:**

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը՝ գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ ֆինանսների նախարարությունը, որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 13-րդ կետով նախատեսված լիազորված մարմին, «Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ տարաբնույթ ընկալվող դրույթների վերաբերյալ» 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանման մեջ նշել է, որ նկատի

ունենալով, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության վերաբերյալ, սակայն գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը չի բավարարում հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին, ուստի այդ հանգամանքը դիտարկվում է որպես մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչի արդյունքում դադարեցվում է այդ մասնակցի հետագա մասնակցությունը գնման գործընթացին և մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանումը, Խորհուրդը գտնում է, որ «Տարտլետ» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետը՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.12.2017թ. թիվ 03/26-3/22122-17 գրությամբ «Տարտլետ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 03540233) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել և «Տարտլետ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝



ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ